

ԱՌԱՅՑ ԴԱԻԱՆԱՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկեիչի

Թարգմ.¹⁾ Տ. ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԱՐԱՋԻՆ

Հունի, 9 տօնաւարի 1883 թ.

Սրանից մի քանի ամիս առաջ ես պատահեցի իմ ընկեր ու բարեկամ Խւզեֆ Մնեատինսկովն, որ վերջերքս աչքի ընկնող դիրք է գրաւել մեր գրողների մէջ։ Մնեատինսկին ինձ հետ գրականութեան մասին խօսելիս ահադին նշանակութիւն էր տալիս յիշատակարաններին։ Նա ասում էր, թէ իրանից յետոյ յիշատակարան թողնող մարդը տալիս է ապագայ հոգեբաններին ու վիպագիրներին ոչ միայն իւր ժամանակակից բարքերի պատկեր, այլև միակ մարդկային դոկումենտ, որին կարելի է հաւատ ընծայել։ Նա գուշակութիւն էր անում, թէ ապագայի բելլետրիստիկական գրւածքները անպատճառ յիշատակարանի ձև կ'ընդունեն։ Վերջապէս նա պնդում էր, թէ ամեն մի յիշատակագիր իւր յիշատակարան գրելովը աշխատում է հասարակութեան օգտին և դրանով արժանի է դառնում նրա երախտագիտութեան։

1) Թարգմանւած է ռուբէնից լեկերէն ընտաղքի համատառթեամբ։ Անկերէն բառերէն թարգմանել է Պ. Ալեքս. Առաջնամատաղքի վ. Առւրով։

Նրեսաւն ու հինգ տարեկան եմ, սակացն չեմ կարողանում յիշել անգամ մի ամենաչնչին ծառայութիւն, որ ես մատուցած լինեմ հասարակութեանը, գուցէ այն պատճառով, որ համարանն աւարտելուց յետոյ ես շարունակ, եթէ չը հաշւենք մի քանի կարճատե ընդմիջումները, հայրենիքիցս զուրս եմ ապրել, Չը նայելով իմ սկեպտիկականութեանը, որ այնպէս է ծծմբ իմ մէջ ինչպէս հեղուկը ծծւում է սպունզի մէջ, վճռել եմ յիշատակարան գրել, Եթէ այդ իսկական գործ է, եթէ մէկն ու մէկին կարող եմ ծառայութիւն մատուցանել, ես ուրախութեամբ կը մատուցանեմ թէկուզ հէնց այդ ձեռվի Բայց կարող եմ բոլորովին անկեղծ լինել, Ես սկսում եմ այս յիշատակարանը ոչ միայն վերովհեալ նկատումներով, այլ և այն պատճառով, որ այդ միաբը ինձ հետաքրքրեցնում է: Մնեատինսկին պնդում է, թէ բաւական է որ մարդ մի անգամ սովորի իւր մտքերն ու տպաւորութիւնները գրի անցնել, էլ այնուհետեւ այդ զբաղմունքը կը զառնայ նրա կեանքի զւարձութիւններից մէկը, Եթէ հակառակը դուրս գայ՝ թող այն ժամանակ Աստւած ողորմի իմ յիշատակարանին, Ես ինքս ինձ խարելիս կը լինեի, եթէ կատարեալ հաւաստիութեամբ չը նախատեսէի, որ այն ժամանակ յիշատակարանս կը կտրւի շափազանց ձգւած լարի նման: Ես շատ նեղութիւն յանձն կ'առնեմ հասարակութեան համար, բայց ձանձրանալ հասարակութեան համար—ոչ: Ազդ ես չեմ անիլ, որովհետեւ չեմ կարող անել:

Դրա փոխարէն վճռել եմ չը վհաստել սկզբի դժւարութիւններից. կ'աշխատեմ քիչ-քիչ ընտելանալ ու սիրել այդ աշխատանքը: Մնեատինսկին մեր խօսակցութիւնների ժամանակ շարունակ կրկնում էր, և միայն թէ ոչ մի ոճի յետեկց մի ընկնիլ գրողավարի մի գրիւ: Դատարկ բան է: Ես շատ լաւ հասկանում եմ, որ՝ որքան մեծ է զբոյլ այնքան պակաս գրողավարի է զբում նա, բայց ես գիլետանս եմ և ձեւ ինձ չի հնագանդում: Սեպհական փորձովս գիտեմ, որ շատ մոտածող ու բուռն կերպով զգացող մարդու. շատ անգամ թւում է, թէ բաւական է որ մտածածն ու զգացածը գրի անցնի և չը տեսնւած բան դուրս կը գալ... Բայց հէնց որ այդպէս կարծող մարդը նատում է գրելու, իսկո՞ն մի որ և է ստիլիստիկական ձեւի է ենթարկւում, —թէկուզ հէնց իւր համար գրելիս լինի, —սկսում է զանազան արւեստական դիրքեր ընդունել յիմար ճոռումա-

բանութեան լեռուից է ընկնում, մոքերը զվարում դէմ են առնում ու չեն ուզում գրի անցկենալ... և այն ժամանակ կարելի է ասել որ ոչ թէ զլուխն է զեկավարում գրիւը, այլ գրիւը՝ զլուխը, և զեկավարում է յիմար, անշնորհք կերպով։ Ես էլ հէնց դրանից եմ վախավարում և յիմար, անշնորհք կերպով։ Ես էլ հէնց դրանից եմ վախավարում և այն պատճառով, որ եթէ խենում, և վախենում եմ զվարապէս այն պատճառով, որ ամառ փորձառութիւն, ճարտար լեզու, գեղարւեստականութիւն, բանաստեղծականութիւն ծական պարզութիւն և այլն չունեմ, յամենայն դէպս զուրկ չեմ ճաշակից, և իմ ոճը կարող է այն աստիճան զգելի դառնալ ինձ համար, որ անհնար լինի յիշաստակարանս շարունակելը։ Բայց այդ յետոց կ'երեւի։

Այժմ ես ուզում եմ սկսել յիշաստակարանս կարճառօտ կենաս-գրական յառաջաբանով։ Այդ անում եմ մասսամբ նրա համար, որ ուշք ու միտքս ամփոփեմ, մասսամբ էլ ուրիշ նկատութներով։ Մնեատինսկին ասում էր, որ յիշաստակարանս մէկն ու մէկի ձեռքը կ'ընկնի ու մի բանի պէտք կը գայ, իսկն ասած, ես կարող էի բոլորովին անտարեր կերպով վերաբերել այդ բանին, բայց այդ ինձ թելադրւած է (ինչպէս այժմ ասում են) և ես չեմ կարողանում ազտուել այդ թելադրութիւնից ու կը զրեմ այնպէս իրը թէ միայն ինձ համար չեմ գրում։ Ահա թէ ինչու ես կարճառօտ կերպով կը պատմեմ անցեալս, որպէսզի ներկաս ու ապագաս աւելի հասկանալի լինեն։ Արդեօք այդ երբ և իցէ և ում և իցէ օգուտ կը բերի, — այդ՝ անկեղծ ասած՝ հոգ չէ ինձ։

Անունս 1.հոն Պլոշովսկի է. ես, ինչպէս վերևն ասացի, երեսուն ու հինգ տարեկան եմ։ Մեր ընտանիքը մինչև այժմ պահպանել է իւր բաւական մեծ հարսաւութիւնը։ Գալով ինձ, ես ստացած ժառանգութիւնս չեմ աւելցնիլ, բայց չեմ էլ վասնիլ։ Իմ դրութիւնս այնպէս է, որ կարօտութիւն չունեմ ձատել որ և է բարձր դիրք ձեռք բերել կամ ամրոխը ճղելով ճանապարհ բաց անել ինձ համար, փշարար ու վեաստակար սովորութիւններ չունեմ, — կեանքում ես սկեպտիկ եմ և գիտեմ, թէ ինչ բան ինչ արժէք ունի կամ, ուրիշ խօսքերով ասած, գիտեմ, որ բոլոր բաներն էլ շատ չնշին արժէք ունեն։

Մայրս իմ ծնւելուց մի շաբաթ անցած մեռել է։ Հայրս, որ իւր արեի պէս սիրելիս է եղել նրան, ընկել է մելամաղձութեան մէջ։ Վիէննալում մի քիչ լսուանալուց յետոց նա այլ ևս չի ուզեցել վերա-

դառնալ իւր տոհմական կալւածը (այստեղ առնեն բան կը ցիշեցնէր նրան իւր կրած ծանր կորուստը), զիջել է Պլոշովը քրոջը, իսկ ինքը 1848 թ. տեղափոխել է Հոռոմ, ուր շարունակ ապրել է մինչև այժմ չ'ուզենալով հեռանալ հանգուցեալ կնոջ գերեզմանից։ Մուացալ ասել, որ մօրս մարմինը նա տեղափոխել է և թաղել է Ծառո-ում։

Բարուինո փողոցում մենք առւն ունենք, որ կոչւում է Casa Osoria՝ մեր տոհմանշանից առած անունով։ Այդ տունը մասամբ թանգարան է ցիշեցնում։—Հայրս հարուստ հաւաքածու ունի զանազան հնութիւնների՝ մանաւանդ քրիստոնէութեան առաջին դարերից մնացածների։ Այժմ այդ հնութիւնները դարձել են նրա կեանքի ուղեցոց աստղը։ Երիտասարդ ժամանակը նա առնեն կողմից փայլուն մարդ է եղել։ Ազնւական տոհմի և հարստութեան շնորհիւ նրա առաջ բաց են եղել բոլոր ճանապարհները։ ամենքն ասելիս են եղել որ նա փայլուն ապագայ կ'ունենայ։ Ես այդ լսել եմ նրա համալսարանական (Բերլինի համալսարանի) նկերներից։ Հայրս այն ժամանակ շատ պարապելիս է եղել փիլիսոփայութեամբ և ամենքը այն կարծիքին են եղել, որ նրա անունը ժամանակով պէտք է հաջակի էր այնպէս ինչպէս Յեշովսկու, Լիբելոփի և այլն անունները։ Բայց աշխարհային կեանքը և այն չը տեսնած յաջողութիւնը կանանց շրջանում, որ նա ունեցել է, հեռացրել են նրա ուշք ու միտքը գիտնական զբաղմունքներից։ Դահլիճներում նրան անւաննելիս են եղել «Léon l'invincible» (Լեոն անգաղթ)։ Սակայն հայրս, չը նայելով իւր՝ աշխարհային շրջաններում ունեցած յաջողութեանը, շարունակել է պարապել փիլիսոփայութեամբ, և բոլորը սպասելիս են եղել, որ նա այսօր-էղուց շարադրութիւն կը հրատարակի, որ նրա անունը կը հաւաքի ամբողջ եւրոպացում։

Այդ յոյսերը չ'արդարացան։ Հայրս արդէն ծերունի է, թէև ես մինչև այժմ գեռ ևս տեսած չը կամ մի գլուխ, որ նրա զիսից աւելի գեղեցիկ ու վսեմ լինի։ Նկարիչներն էլ այդ կարծիքին են, իսկ նրանցից մէկը ինձ սրանից մի քանի օր առաջ ասաց, որ պատրիկի (սարքավայ) տիպի համար աւելի լաւ օրինակ (մողել) երեւակայել չի կարելի։ Դիտութեան վերաբերմամբ հայրս եղել է, և կը լինի շատ կրթւած աղա-դիլետանու։ Որոշեալ չափով ես հաւատացած եմ, որ բոլոր Պլոշովսկիների ճակատագիրն է, դիլետանա լինել և մանրամասն

կը խօսեմ այդ հարցի վերաբերմասթ երբ որ խօսքը գայ իմ մասին։
Հօրս գրասեղանի արկղում ընկած է հնութիւնից զեղնած մի
փիլիսոփայական շարադրութիւն «Երորդական» անութեան մա-
սին։ Ես աչքի անցրի այդ ձեռագիրը, —նա ինձ վրայ ձանձրու-
թիւն բերեց։ Այն եմ միշտում միայն, որ այդ շարադրութեան մէջ՝
չը գիտեմ ինչպէս, «համեմատում» են իրար հետ իրական (րէալական)՝
երրորդութիւնը՝ թթւածինը, ջրածինն ու ազուր՝ և տրանսցեղենտալ
երրորդութիւնը. բացի դրանից ուրիշ շատ համեմատական երրորդու-
թիւններ կան՝ սկսած բարուց, զեղեցկից ու ճշմարաից և վերջաց-
նելով տրամաբանական հաւաքարանութեամբ, որ բաղկանում է առա-
ջն ու երկրորդ յառաջադրութիւններից և եզրակացութիւնից, —
խառնուրդ Նեգելիանական գաղափարների Գեօնէ՝ Վրոնսկու գաղա-
փարների հետ, մորքի ջանք շատ ճարտար և բոլորովին սպարզիւն։
Ես համոզւած եմ, որ հայրս երբէք չի տպիլ իւր շարադրութիւնը՝
թէկուզ այն պատճառով, որ սպեկուլատիւ փիլիսոփայութիւնը նրա
աչքում աւելի շուտ է մնանկացել քան ամբողջ մարդկութեան աշ-
քում։

Այդ մնանկութեան պատճառն եղել է մօրս մահը Հայրս, որ՝
չը նայելով իւր «l'invincible» (անլաղթ) մականւանը և սրտերնւաճողի
հոչակին՝ չափից դուրս զգայուն ու քնքով սրտի տէր մարդ է եղել, իւր
փիլիսոփայութեանը բազմաթիւ սարսափելի հարցեր է առաջարկել և
ոչ մի միսիթարանք, ոչ մի պատասխան չը ստանալով՝ եկել է այն
համոզմունքին, որ այդ փիլիսոփայութիւնը ունայն ու անզօր է կեն-
սական դժբախտութեան առաջ։ Սարսափելի տրագեդիա է եղել նրա
կեանքում, երբ որ նա միանգամից զրկել է երկու նեցուկից, երբ որ
մի հարւած կտրասել է նրա սիրաը և ջախջախել՝ ուզելլը։ Խնչպէս
վերեն ասացի՞ հայրս ընկել է մելամաղձութեան մէջ, իսկ մելամաղ-
ձութիւնն անցնելուց յետոյ դիմել է կրօնին։ Ինձ ասել են, որ մի ժա-
մանակ նա դիշեր-ցերեկ աղօթելիս է եղել, ամեն մի եկեղեցու առաջ
ծունկ է չոքել և հասել է այն աստիճան կրօնական յափշտակութեան,
որ Հռոմում ումանք նրան գմի տեղ են դնելիս եղել, ումանք՝ որբի։

Երեկի դրանից նա աւելի է միսիթարութիւն ստացել քան իւր
փիլիսոփայական երրորդութիւններից, որովհետեւ հետզհետէ հանգըս-
տացել է ու սկսել է իսկական կեանք վարել։ Նրա սիրոյ ամբողջ

ոյժը կետրոնացել է ինձ վրայ, իսկ էսթետիկական ու մտառոր պահանջները դրդել են նրան ուսումնասիրել քրիստոնէութեան առաջին դարերը: Հօրս խելքը կայտառ, զործունեաց խելք է եղել, մնունդ է պահանջնել Հռոմում մի տարի մնալուց յետոյ նա սկսել է պարապել հնագիտութեամբ: Տէր Կալվին, իմ առաջին դաստիարակը, որ երեսի հռոմադէռ էր, հօրս դրդեց Յաւիտենական Քաղաքի պատմութեամբ զրադշել:

Մի քանի տարի անցնելուց յետոյ հայրս ծանօթութիւն սկսեց մեծ Ռոսաիի հետ, — ծանօթութիւն, որ յետոյ փոխւեց բարեկամութեան, — և նրա հետ միասին ամբողջ օրերով ման էր զալիս կատակութներում: Խւր արտակարգ ընդունակութիւնների շնորհիւ նա շուտով այնպէս տեղեակ դարձաւ Հռոմին, որ յաճախ զարմացնում էր նոյն իսկ Ռոսաիին իւր տեղեկութիւններով: Մի քանի անգամ նա զրիչ է առել ձեռքը, բայց չի կարողացել վերջացնել սկսածը և այդպէս չը վերջացրած էլ թողել է: Գուցէ հօրս ժամանակը ամբողջապէս կօրչում էր զանազան հաւաքածուներ լրացնելու վրայ, բայց ինչ և իցէ շատ հաւանական է, որ նա իրանից յետոյ ոչինչ չի թողել բայց հաւաքածուներից, որովհետև նա ընդունակ չէ կանգ առնելու մի որ և է ժամանակաշրջանի վրայ, ընարելու մի որ և է մասնագիտութիւն: Հետզհետէ յարանների միջնադարեան Հռոմը սկսեց զրաւել նրան նոյնքան ասատիկ որբան զրաւում էին քրիստոնէութեան առաջին դարերը: Կար ժամանակ, երբ հօրս զլուխը ամբողջապէս զրադւած էր Կոլոններով ու Օրսինիներով, յետոյ նա մօտիկացաւ վերածնութեան դարերին ու վերջնականապէս սիրահարւեց այդ ժամանակաշրջանի վրայ: Նախնական քրիստոնէական ճարտարապետութեան բեկորներից, յիշատակարաններից ու արձանադրութիւններից նա անցաւ աւելի ուշ ժամանակներին, բիւզանդական զեղարւեսից՝ Ֆիոզելիին ու Զոստոփին, նրանցից էլ՝ շինկւեչնոտիստներին և այն, գրաւեց արձաններով, պատկերներով: Հաւաքածների համար այդ անկասկած օգտակար էր, բայց դրա շնորհիւ չ'իրազործւած զիտաւորութիւնների շարքն անցաւ Երեք Հռոմների մասին լեհերէն մեծ շարադրութիւն դրելու ցնորքը, որ փացփացում էր հայրս:

Խւր բոլոր հաւաքածուները հայրս ուզում է կոսկել Հռոմ

քաղաքին՝ այն անհրաժեշտ պայմանով, որ այդ հաւաքածուները դրեն առանձին գահին գումարում, իսկ դահլիճի դրան վրայ արձանագրւած լինի «Օզորի Պոշովսկիների թանգարան»։ Երեխ հէնց ազդպէս էլ կը լինի, —ինձ զարմացնում է միայն այն, որ հայրս համոզւած է, թէ ազդպիսով նա աւելի մեծ օգուտ կը բերի հասարակութեանը քան եթէ հաւաքածուները տանէր իւր հայրենիքը։

Մօտ օրերս էր, որ նա ինձ ասաց.

— Անստեղ ոչ ոք չի տեսնիլ այդ հաւաքածուները, ոչ ոք նրանցից օղուտ չի քաղիլ, իսկ այստեղ գալիս են մարդիկ աշխարհին բոլոր ծացրերից և ամեն մարդ լեհերից մէկի մասուցած ծառայութիւնը կը վերապըի ամբողջ Լեհաստանին։

Հարկ չեմ համարում քննել թէ արդեօք այդ մասամբ արիստոկրատիկական մնափառութիւնից չի լառաջանում և թէ արդեօք այդ հարցի մէջ վճռական նշանակութիւն չի ունեցել այն միաքը, որ Պոշովսկիների տոնմանունը կը ննայ փորագրւած մարմարիոնի վրայ Յաւիտենական քաղաքում։ Անկեղծ ասած՝ ես կարծում եմ, որ հէնց ազդպէս է եղել Խակ առհասարակ վերցրած՝ իշ սկի հոգս չէ թէ որտեղ կը գտնելի հօրս հաւաքածուն։

Իսպացնում (ի գէպ՝ այս քանի օրս ես գնալու և Ի նրա մօա՝ Վարշաւա) գալրանում է երբ որ լսում է հօրս մատադրութեան մասին, և քանի որ աշխարհում չը կայ մի մարդ, որ կարողանայ արգելել նրան իւր կարծիքը յացոնել նա առանց այլևայլութեան արտապայտում է իւր գալրովթը ամեն անգամ հօրս նամակ դրելիս Մի քանի տարի սրանից առաջ՝ Հռոմեում եղած ժամանակը նա դրա համար ամեն օր կուռում էր հօրս հետ և կարգին կը խռովէր, եթէ որ ինձ անշափ սիրելիս չը լիներ։ Հօրաքոյրս իւր եղբօրից մի քանի տարսով մեծ է։ Հայրս մօրս մահից յետոյ արտասահման գնալիս բաժանւել է նրանից, —նրան թողել է Պոշովը, իրան վերցրել է փողը։ Հօրաքոյրս երեսուն տարի է, որ կասավարում է կալւածը և հիսոնալի է կաւալվարում։ Նա աչքի ընկնող ընաւորութեան ակր կին է, ուստի ես կը նախիրեւմ նրան մի քանի խօսք։ Քան տարեկան հասակում մահը զրկել է նրան նշանածից հէնց այն օրը, երբ նա պատրաստել է զնալ արտասահման նրա մօտ, և այնուհետեւ նա յամառութեամբ մերժել է բոլոր փեսացուներին։ Մօրս մահից յետոյ

նա ուղեկցել է հօրս Վիէննա ու Հոռոմ, ուր ապրել է մի քանի տարի շրջապատելով եղբօրը ամենաքննողը հոգածարութեամբ։ Հօրաքոյրս grande dame է այդ բառի կատարեալ նշանակութեամբ, մի քիչ բանակալ է, զուոզ է ու սիրում է փնինթալ ամենքի վրայ, շատ ինքնավատահ է ինչպէս առհասարակ լինում են մեծ հարասութեան տէր ու բարձր հասարակական դիրք ունեցող մարդիկ։ իսկ իսկապէս մարմնացած առաքինութիւն է։ Նրա անդուր արտաքինի տակ ծածկւած է անդին, քաջցր սիրտ, որ սիրում է ոչ միայն հօրս, ինձ, անեցոց, այլ և ընդհանրապէս բոլոր մարդկանց։ Նա այնքան առաքինի է, որ իմ կարծիքով առաքինութիւնը նրա համար արժանաւորութիւն չէ, — նա չի կարող առաքինի չը լինել նրա բարեգործութիւնը ասելիք է զարձել։ Նա հայնուում է ծերունիներին ու պատաւներին կոնտերլի նման և խնամք է տանում նրանց սուրբ Ֆրանտուա դը-Պօլի նման։ Նա սաստիկ կրօնասէր է։ Կասկածանքի ոչ մի նշով երբէք չի թափանցել նրա հոգու մէջ։ ինչ որ նա անուում է անկեղծ համոզմունքով է անում, ուստի երբէք չի տարակուում ընտրութիւն անելի։ Գուցէ դրանից է, որ նա միշտ հանգիստ է ու բախուաւոր։ Վարշաւացում հօրաքրոջս le bourreau bienfaisant (բարեգործ դահիճ) են անւանում նրա խստութեան պատճառով։ Ումանք մանաւանդ կանացք չեն սիրում նրան, բայց առհասարակ նա մեծ ազգեցութիւն ունի։

Պլոշովը Վարշաւացի կողքին է։ Վարշաւացում հօրաքրոյրս տունի, որտեղ սովորաբար անց է կացնուում ձմեռը։ Ամեն աշունքավերջ նա աշխատուում է ինձ համոզել, որ գնամ իւր մօտ, — միտքը ինձ պսակըն է։ Ահա այժմ էլ նրանից ստացել եմ մի սաստիկ խորհրդաւոր նամակ, — շատ խնդրուում է որ գնամ տեսութեան։ Պէտք է գնալ. մի քանի տարի կը լինի հայրենիքումն չեմ եղել, համ էլ հօրաքրոյրս դրում է թէ պատասում է ու շատ կուղէր ինձ տեսնել մահից ստաց։

Խոստովանուում եմ, շատ էլ սրտով չեմ գնում և հաստան։ Առաջինը՝ խորթացել եմ, երկրորդը՝ գիտեմ, որ հօրաքրոյրս անսպատճառ ուղում է ինձ պսակել իսկ ես քանի անդամ հիւր գնամ նրա մօտ այնքան անգամ պէտք է հիասթավիեցնեմ նրան։ Սրտիս սարսափ է տիրում, երբ որ մոտածում եմ այզպիսի մի վճռական քայլի մասին, որից յետոյ պէտք է սկսել մի նոր կեանք, քանի որ այս առաջին

կեանկովս էլ բաւական թեզարել եմ Բացի այդ՝ իմ ու հօրաքրոջս յարաբերութիւնները մի քիչ փափուկ են գոնէ ինձ համար: Ինչ կարծիք որ մի ժամանակ հօրս մասին են ունեցել նրա մօտիկ ծանօթները, նոյն կարծիքն էլ հօրաքոյքս ունի այժմ իմ մասին՝ այսինքն ինձ համարում է շափազանց մեծ լնդունակութիւնների տէր մարդ, այնպիսի մարդ, որից ապագայում կարելի է մեծ գործեր սպասել: Թողնել որ նա մնայ այդ կարծիքին—կը նշանակի իշարը գործ դնել նրա վստահութիւնը. ասել որ ինձնից չի կարելի սպասել ոչ միայն մեծ գործեր, այլ և առհասարակ որ և է գործ, — այդ էլ անյարմար է: Այն ժամանակ ես կ'ընկնէի հակառակ ծայրայիղութեան մէջ և բացի այդ սաստիկ կը վշտացնէի խեղճ պառաւի սիրտը:

Գուցէ՝ ի մեծ դժբախտութիւն իմ՝ մօտիկ ծանօթներիցս շատ շատերը նոյն կարծիքն ունեն ինձ վրայ ինչ որ հօրաքոյս Քանի որ խօսքն եկաւ իմ մասին ես թոյլ կը տամ ինձ նկարագրել իշ պատկերը, որ շատ էլ հեշտ չի լինի որովհետեւ ես շափազանց բարդ արարած եմ:

Ես աշխարհ եմ եկել սաստիկ տպաւորւող, ամբողջ մի շարք սերունդների կուլտուրայից նրբացած ջղերով: Սկզբում հօրաքրոջս իննամստարութեան տակ եմ եղել, յետոյ անցել եմ զանազան դայեակների ձեռք: Մենք ապրում էինք Հումում, օտար ժողովդի մէջ, բայց հայրս ուզում էր, որ ես լաւ իմանամ մեր մայրենի լեզուն և այդ պատճառով իմ դայեակներից մէկը լեհուհի էր: Նա մինչեւ այժմ էլ ապրում է Բարուինո փողոցում գտնւող մեր տանը իբրև տնտես: Հայրս էլ ինձ հետ շատ էր պարապում՝ մանաւանդ հինգ տարիս լրանալուց յետոյ, իսկ վերջը, երբ որ նա սկսեց համարեա իւր բոլոր ժամանակը նւիրել հնագիտական հետազոտութիւններին և հաւաքածուները լրացնելուն, ինձ համար ուսուցիչ վարձեց Կալւի քահանային: Այդ քահանան հասակն առած մարդ էր՝ շափից դուրս մաքուր ու պարզ հաւատով և հոգով: Նա ինձ շատ էր սիրում՝ աւելի քան բոլոր զեղարւեսները: Ես կարծում եմ՝ նա մինչեւ անգամ կրօնն էլ ըմբռնում էր միմիայն նրա զեղեցկութեան շնորհիւ: Թանգարաններում՝ մեծ արւեստագիւնների վաճինի կամ քանդակագրչի արտադրութիւնների առաջ, Սկզբան մասու-

առւմ¹⁾ երաժշտութեան հնչիւնների ազգեցութեան տակ՝ տէր Կալւին ընկնում էր կատարեալ ինքնամոռացութեան մէջ։ Սակայն հեծանոսական ունիւ բան չը կար այն խոր սիրոց մէջ, որ նա տածում էր դէպի գեղարւեաոը. այդ սէրը հիմնում էր ոչ թէ սիրարիտութեան, զգացածիրութեան վրայ, այլ մաքուր զգացմունքի վրայ։ Տէր Կալւին սիրում էր գեղարւեաոը այն մաքուր ու պարզ սիրով, որով կարող էին սիրել Ֆիօգելին, Գիմարուէն կամ Զոտոսն, ու մինչեւ անգամ աւելի էլ—սիրում էր ողջախոնութեամբ, որովհետեւ ոչ մի ձիրք չ'ունէր։ Նա քիչ էր խօսում, բայց խոր էր զգումն և մինչեւ անդամ ըս գիտեմ՝ գեղարւեաոի մը ճիւղն էր աւելի նրա սրտովը։ Ինձ ժուռմէ է, բոլոր գեղարւեանների մէջ նա ամենից աւելի սիրում էր ներդաշնակութիւնը, որ համապատասխանում էր նրա ներքին ներդաշնակութեանը։

Զը գիտեմ ինչու, բայց հնաց որ ես սկսում եմ մտածել տէր Կալւիի մասին, միոքս է զալիս՝ Բայիակէլի սուրբ Յեցիլայի կողքին կանգնած ու երկնալին երաժշտութեան ականջ գնող ծերունին։

Հօրս ու տէր Կալւիի բարեկամութիւնը տեսց մինչեւ վերջինի մահը։ Նա էր, որ հօրս սէր ներշնչեց դէպի հնագիտական հետազոտութիւնները և մասնաւորապէս դէպի Յաւիտենական քաղաքը։ Նրանք երկուսով էլ ինձ համարում էին արտակարգ երեխայ, որին շատ նշանաւոր ազգագայ է սպասում։ Իմ մոգովիս յաճախ անցնում է, որ ես էլ նրանց համար մի տեսակ՝ նրանց արտաքին աշխարհի հետ կապող՝ ներդաշնակութիւն էի և որ նրանք ինձ էլ նոյն սիրովն էին սիրում, ինչ սիրով որ սիրում էին Հոռմն ու նրա լիշտակարանները։

Այդ տեսակ մթնոլորով, այլպիսի պայմանները չէին կարող չ'ազդել ինձ վրայ։ Ինձ գաստիարակում էին բաւական տարօրինսակ կերպով։ Ես՝ տէր Կալւիի, երբեմն էլ հօրս հետ գնում էի ման դալու քաղաքամէջի գեղարւեատական գալլերէնները, թանգարանները ու քաղաքից դուրս գանւող ամարանոցները, աւերակները, կատակոմբները։ Տէր Կալւին, որ հաւասարապէս նուրբ կերպով ըմբունում էր թէ գեղարւեատի և թէ բնութեան գեղեցկութիւնները, ինձ էլ սովորեցրեց

¹⁾ Վատիկանեան պալատում։

Ծանօթ. թարգմ.

հասկանալ Հռոմի Կամպանիացի մելամաղձիկ հրապոյրները, — այն ներ-
նաշնակութիւնը, որով աւերւած ջրանցքների կամարներն ու գծերը
նկարւում են երկնքի վրայ, և հին գծերի կոնտուրների մաքրութիւնը
այն ժամանակ, երբ դեռ լաւ չը գիտէի թւաբանական չորս դոր-
ես այն ժամանակ, երբ դեռ լաւ չը գիտէի թւաբանական չորս դոր-
ես անդամ ուղղում էի անդիմացիների սխալը,
ծողութիւնները, շատ անդամ ուղղում էի անդիմացիների սխալը,
որոնք միշտ Կարրաչիին խառնում էին Կարաւաջօի հետո Խատիներէնը
ես վաղ սովորեցի ու առանց դժւարութեան. լատիներէնը սովորելուա
ես օգնեց խոալերէն իմանալս, իսկ խոալերէն՝ իրեւ Հռոմի բնակիչ՝ ես
բոլորովին ազատ խօսում էի Տանըմէկ տարեկան ժամանակս ես կար-
բոլորովին ազատ խօսում էի Տանըմէկ տարեկան ժամանակս ես կար-
բոլորովին ազատ խօսում էի Տանըմէկ տարեկան ժամանակս ես կար-
բոլորովին ազատ խօսում էի Տանըմէկ տարեկան ժամանակս ես կար-
բոլորովին ազատ խօսում էի Տանըմէկ տարեկան ժամանակս ես կար-
բոլորովին ազատ խօսում էի Տանըմէկ տարեկան ժամանակս ես կար-
բոլորովին ազատ խօսում էի Տանըմէկ տարեկան ժամանակս ես կար-

Այդ տեսակ միջնորդում ջղերս վաղ զարգացան և տպաւորւող
դարձան ու այդպէս էլ մնացին ընդ միշտ Զարմանալի է սակայն, որ
վերոյիշեալ աղղեցութիւնները ոչ այնքան խոր էին, ոչ էլ վճռողա-
կան, որքան կարելի էր սպասել Որ ես արւեստագէտ չը դարձայ, այդ
կան, բացաւ ահա կարելի էր սպասել Որ ոչ մի ձիրք չ'ունէի, թէպէտե երա-
ծշտութեան ու նկարչութեան ուսուցիչներս հակառակ կարծիքին
էին. բայց ես յաճախ մոտածում եմ, թէ ինչն ոչ հայրս, ոչ էլ
տէր Կալւին չը կարողացան ներշնչել ինձ իրանց սաստիկ գեղարւես-
տասիրութիւնը այն չափով որ իրանց մէջ կարու Սիրնւմ եմ ես ար-
դեօք գեղարւեստը, — այս. հարկաւան է ինձ գեղարւեստը, — այս, հար-
կաւոր է: Բայց նրանք այնպէս էին սիրում գեղարւեստը, ինչպէս
ապէտքն է, իսկ ես իրեւ գիլլեստանս եմ վերաբերում նրան. գե-
ղարւեստը ինձ պէտք է իրեւ՝ կենսական ուրիշ տպաւորութիւնները
լրացնող բանու նա ինձ համար գուրեկան բաների թւին է պատկա-
լլացնող բանու նա ինձ համար գուրեկան բաների թւին է պատկա-
լլացնող բանու նա ինձ համար գուրեկան բաների թւին է պատկա-
լլացնող բանու նա ինձ համար գուրեկան բաների թւին է պատկա-

Որովհետեւ խոալական ուսումնարանները բաւական անմիտիթար վի-
ճակի մէջ էին, հայրս ինձ տուեց Մեց քաղաքի կուլեմը (գիմնազիա): Այնաեղ

ուսումն ես շուտ աւարտեցի ու առանց մեծ զժւարութեան, բայց շատ փառաւոր կերպով և այն բոլոր պարզեներով, որ կարելի էր ստանալ ձիշտ է՝ այն էլ պէսք է ասել, որ ուսումն աւարտելուց մի տարի առաջ ես փախալ Դոն-Կարլոսի մօտ և երկու ամիս Տրիստանի գօրախամբի հետ քաշ էի գալիս Պիրենէցեան սարերում։ Խնձ գտան Բուրդոսի ֆրանսիական հիւսատոսի օգնութեամբ և ուղարկեցին Մեց՝ ապաշխարելու։ Սակայն պէսք է ասեմ, որ ապաշխարանքը այնքան էլ ծանր էր և հայրս ու դպրոցի վարչութիւնը սրտանց պարձենում էին իմ արշաւանքով, իսկ հարցաքննութիւններիս յաջողութիւնը բոլորովին մոռացնել տուեց նրանց իմ արած յանցանքու։

Մեցի կոլեժում, որտեղի բոլոր աշակերտները Դոն-Կարլոսի թունդ համակրողներիցն էին, ես ի հարկէ հերոս էի համարւում։ Ես տոն էի տալիս ամբողջ դպրոցին և ոչ չէր համարձակւում ինձ հետ մրցել առաջին աշակերտի տեղը բռնելու համար։ Ես մեծանում էի ակամայից այն համոզմունքով, որ յետոյ էլ, աւելի ընդարձակ ասպարեզում, նոյնը կը լինի։ Այդ համոզմունքին էին նոյնպէս և իմ ուսուցիչներն ու բնկերները։ Ընկերներիս սկի մոքովն էլ չէր անց կենում, որ իրանք երբ և իցէ կը կարողանան մրցել ինձ հետ, մինչ սակայն նրանցից շատերը այժմ Ֆրանսիայում բարձր դիրք ունին գրականական, հասարակական ու քաղաքական ասպարեզում, երբ ես դեռ ևս ոչ մի մասնագիտութիւն չեմ ընտրել ինձ համար և սաստիկ կը զժւարանայի, եթէ ինձ հրամայէին ընտրել։ Հասարակական դիրքս փալուն է, — մայրս ինձ ժառանգութիւն է թողել, երբ և իցէ հայր էլ կը թողնի, տիրութիւն կ'անեմ Պլոշովին, լաւ ու վատ կը կառավարեմ իմ բոլոր կալւածները, — բայց արդէն այդ պարապմունքների ուղղութիւնը ինձ համար անհնար է դարձնում։ կեանքում երբ և իցէ որ և է գեր խաղալու լոյսը։

Որ ես երբեք լաւ տնտես ու գործնական մարդ չեմ լինի, այդ ես շատ լաւ գիտեմ, — ես ամենեան չեմ ուղում ձեռք քաշել իմ գործերից, բայց միենայն ժամանակ չեմ ցանկանում նրանց նւիրել իմ ամբողջ կեանքս, — իմ ձգտումները շատ աւելի լայն են։

Երբեմն-երբեմն ես ինքս ինձ հարց եմ տալիս, — արդեօք մենք՝ Պլոշովակիներս չենք չափազանցացնում մեր ընդունակութիւնները։ Բայց եթէ այդ ճիշտ լինէր, այն ժամանակ միմիայն մենք կը սիազ-

էինք, իսկ կողմնակի մարդիկ, օտարները այդ սխալը չեն անիլ։ Այդի այդ՝ հայրս էր և է իսկապէս սովորականից վեր ընդունակութացի այդ՝ հայրս էր մարդ։ Գալու ինձ, ես չեմ ուզում խօսել այդ հարցի թիւնների տէր մարդ։ Եթէ իմ գատողութիւնները չեմար մասին իմ վերաբերմասիր, որպէս զի իմ գատողութիւնները չեմար մասպարծութիւն չը թւան։ բացի այդ՝ ես անկեղծ համոզւած եմ, որ անչափ աւելի մեծ բան կարող էի լինել քան եմ այժմ։

Օրինակ՝ Վարշաւայի համալսարանում (հայրս ու հօրաքոյլը ու զում էին, որ ես կը թութիւնս աւարտեմ հայրենիքում) ես սովորում էի զում էին, որ ես կը թութիւնս աւարտեմ հայրենիքում։ Եթէ զում էի Սնեատինսկու հետո Երկուս էլ կոչումն էինք զում դէպի գրականութիւնը և փորձում էինք ոյժերս այդ ասպարեզում։ Կ' չեմ ասում մասպարծութիւնը շատ աւելի ընդունակ ուսանող էի համարում, բայց, խաչը վկայ, իմ գրածներս էլ շատ աւելի բան էին խոստանում ապագայի համար քան Սնեատինսկու գրածները։ Խսկ մյօմի, — Սնեատինսկին ամեն կողմից բարձր դիրք է գրաւել, իսկ ես մասպարծութիւնս նոյն շատ բան խոստացող պան¹⁾ Պլոշովսկին, որի մասին բարի մարդիկ ասում են զլուխները թափ տալով, «ախ, եթէ որ մի բանի կաչէր»։

Բարի մարդիկը ինկատի չեն առնում, որ պէտք է կամ ենալ կարողանալ։ Նս յաճախ մտածում եմ, որ եթէ հարստութիւն չ'ունենալի, պէտք է մի բանի կաչէր, ի հարկէ։ Նս պէտք է մի կերպ ինձ համար հաց վաստակէի, բայց ներքուստ հաւասարացած եմ, որ այդ պայմաններումն էլ գործ չէր զնիլ ունեցած ընդունակութիւններիս մինչև անգամ մի քսաներորդ մասը։ Բացի այդ՝ այնպիսի մարդիկ ինչպէս Բոկլը, Դարւինը—հարուստ մարդիկ են, սեր Զոն Վեօրդիկ՝ բանկիր է, Ֆրանսիայի յայտնի քաղաքական գործիչներից մեծ մասը կարողութեան տէր մարդիկ են։ Դուրս է գալիս, որ հարստութիւնը ոչ միայն չի խանգարում, այլ ընդհակառակը՝ նպաստում է որ մարդ բարձր դիրք գրաւի հասարակութեան մէջ։ Նս մինչև անգամ ենթադրում եմ, որ ինձ, անձամբ ինձ հարստութիւնը մեծ օգուտ է տւել—պահպանել է բնաւորութիւնս այն բոլոր աղաւաղումներից, որոնց կ' ենթարկեր նա, եթէ աղքատ լինէի։ Ես դրանով չեմ ուղում ասել, իբր թէ բնաւորութիւնս թոյլ է եղել։ ոչ, ուրիշ պայ-

¹⁾ Պան տիտղոսն է լինական աղնասկանների։ Շանօթ. Խմբ.

մաններում կռիւը գուցէ մինչև անգամ աւելի ամրապնդէր իմ քնաւորութիւնը... Բայց չէ որ ճանապարհին քիչ քարի հանդիպողը աւելի քիչ է սայլթաքելու ու ընկնելու վտանգին ենթարկումն

Մուլութեամբ էլ չեմ կարող բացատրել իմ անզործութիւնը: Ես հաւասարաշափ թէ զիտութիւններ իւրացնելու ընդունակութիւն ունեմ՝ թէ հարցասիրութիւն: Ես շատ եմ կարգում, մաքումն էլ շատ բան է մնում: Գուցէ ես երկաթի տոկունութիւն չ'ունեմ, գուցէ ես չեմ դիմանալ երկարատե, սոլիդ աշխատանքի, բայց ինձ հօ ստիպող չը կայ, որ բառարաններ կազմեմ և խոտրէի պէս: Ով որ կարողութիւն չ'ունի արեգակի պէս շարունակ լցու տալ, կարող է մի բռպէով փայլել մետէօրի նման: Բայց աննշան, չնչին արարած լինել ասկազայում, որ համարեա անկասկածելի է... Սիրտս ճնշւում է, տաղուկութիւնը սկսում է տանջել ինձ... Այսօր՝ էլ չեմ դրիւ, յետոյ կը շարունակեմ միշտակարանա:

Հում, 10 լունարին

Երէկ իշխան Մալատեստի երեկոյթում ես լսեցի մի ֆրազ՝ „l'improductivité slave“ (ալաւոնական անարդիսնութիւն) և թեթեռութիւն զգացի, ինչպէս ջղային հիւանդը միսիթարուում է երբ որ թժշկից իմանում է, որ իւր հիւանդութեան նշանները յալոնի են, որ այդ հիւանդութիւնը այժմ ամեն տեղ տարածւած է: Ճիշտ է, ճիշտ, որքան ընկերներ ունեմ հիւանդութեանս կողմից... Զեմ իմանում՝ ամբողջ սլաւոնական աշխարհումն ինչպէս է, — այդ աշխարհը ինձ անծանօթ է, — բայց մեզնում, մեզնում: Ամբողջ գիշերը մոսածում էի այդ „l'improductivité slave“-ի մասին: Յիմար մարդ չի եղել այդ գաղափարը ամփոփարանողը: Մեր մէջ մի տեսակ բան կայ. մի տեսակ կենսական անընդունակութիւն կայ զուրս բերել մեր մէջից այն բոլորը, որ մեր մէջ պարունակուում է: Կարելի է ասել, որ Աստուած տւել է մեզ նետ ու աղեղ, բայց չի տւել մեզ այդ աղեղը լարելու ու այդ նետերը արձակելու շնորհք: Ես կը խօսէի այդ բանի մասին հօրս հետ, մաւանդ որ՝ նա սիրուում է այդ տեսակ խօսակցութիւններ, բայց վախենում եմ դիպչեմ նրա ցաւոս դամարին: Կարծում եմ, որ դրա փոխարէն ես կը լցնեմ յիշտակարանս այդ հարցի լուծմամբ: Գուցէ այդ բանը յի-

շատակարանիս ամենազդիսաւոր արժանաւորութիւնը լինի: Վերջապէս շատ բնական է, որ ես կը գրեմ այն բանի մասին, որ ինձ աւելի է վերաբերութիւն: Ամեն մարդ կրում է իւր մէջ մի որ և է սեփական տրագեդիա: Խմ տրագեդիան՝ Պլոշովսկիների ՝l'improductivité»-ն է: Կողմանակի մարդկանց ներկայութեամբ այժմ չի կարելի պարծենալ այդպիսի բաներով: Դեռ մօտիկ անցեալներս, երբ որ բունանորիզմը շքեղազարդ փթթում էր մարդկանց սրտերում ու բանաստեղծութեան մէջ, մարդիկ իրանց տրագեդիաները կրում էին ի ցոյց՝ գեղեցիկ նստող վերաբերուի նման, իսկ այժմ կրում են Եգերեան բրդէ ֆուֆայկայի պէս՝ շապկի տակից: Բայց միշտակարանը բոլորովին ուրիշ բան է, — յիշառակարանում կարելի է և մինչև անգամ պէտք է անկեղծ լինել:

Հոռմ, 11 լուսարի:

Ես այսուղ մի քանի օր էլ կը մնամ, ուստի օգուտում եմ ժամանակից, որ մի անգամ ընդ միշտ պրծնեմ անցեալը ու յետոյ սկսեմ դէպքերը օրէցօր զրի անցնել: Արդէն ասել եմ, որ միտ չունիմ երկար ու բարակ ինքնակենսազրութիւն զրել — ոլ եմ ես և ինչ տեսակ մարդ եմ՝ բաւականաչափ ցոյց կը տայ իմ ասպազնութիւնը մանրակրիտ հետազօտութիւնը բնութեանս հակառակ է: Գումարման տեսակ մի բան է դուրս դալիս, — մարդ արտագրում է մի քանի թիւ մէկ-մէկի տակ, տակը գիծ է քաշում ու հաշում է: Ես սկի չէի սիրում թւաբանութեան շորս գործողութիւնները, իսկ նրանից՝ մանաւանդ ատելի էր ինձ առաջինը:

Բայց այնու ամենայնիւ ես կ'ուզէի թէկուզ ամենաընդհանուր գաղափար ունենալ գումարի մասին, որպէս զի ինքս ինձ համար փոքր ի շատէ հասկանալի դատնամ, ուստի ես շարունակում եմ:

Համարաբանից յետոյ ես մոտայ Ֆրանսիայում մի երկրագործական դպրոց և աւարտեցի առանց դժւարութեան, բայց և բոլորովին անսիրտ կերպով, իրեւ մի մարդ, որ շատ քիչ է հետաքրքրուում այն առարկայով, որ սովորում է և որ չի համապատասխանում ոչ նրա ընդունակութիւններին, ոչ էլ փառասիրութեանը: Բայց ինչ և իցէ դպրոցը ինձ անկասկած օգուտ տեղ, — առաջինը՝ այնուհետեւ երկրագործութիւնը իմ խելքին մատչելի բան դարձաւ (այժմ ինձ չի

կարող խարել ստացին պատահած կառավարիչը), երկրորդ՝ զաշտում, մաքուր օգում աշխատելը այնքան կազմութեց ոյժերս ու առողջութիւնս, որ Պարիզի կեանքը ինձ վրայ ոչինչ նկատելի ազգեցութիւն չարեց:

Կեանքիս հետևեալ տարիները անցկացրեցի երբեմն Հռոմում, երբեմն Պարիզում, չը հաշւելով կարճատե ուղևորութիւններս Վարշաւա, երբ որ հօրաքոյրս զանազան պատրւակներով կանչում էր ինձ իւր մօտ Պարիզն ու այնուեղի կեանքը սաստիկ գրաւում էին ինձ: Զը նայելով իմ ունեցած ինքնավտահութեանն ու հաստատակամութեանը, որ մարդուս ներշնչում է հաստատ հասարակական զրութիւնը, պէտք է խոստովանւեմ, որ սկզբում բաւական միամիտ դեր էի խաղում ամբողջ աշխարհի այդ մեծ բեմի վրայ: Ամենից առաջ ես թունդ սիրահարեցի Comédie Française-ի դերասանուհի ու—լե Ռիշենբերգի վրայ և ուզում էի անպատճառ պասկել նրա հետ: Թէ ինչ արագի-կոմիկական հանգամանքների մէջ զցեց ինձ այդ սիրահարութիւնը՝ ես չեմ պատմիլ—ամաշում եմ, իսկ երբեմն իմ ծիծաղս էլ է գալիս ինձ վրայ: Եետոյ ինձ մի քանի անգամ խարեցին և, բացի այդ, մի քանի դէպքեր էլ եղան, երբ ես իմ յօժար կամքովս կեղծ դրամը խսկականի տեղ էի ընդունում: Ֆրանսուհին, ինչպէս և լինուհին, թէկուզ հասարակական ամենաբարձր շրջանին պատկանողը, թէկուզ ամենաառաքինին, ինձ սրախաղութեան ուսուցիչ (ֆեխտմէշատէր) է լիշեցնում: Խնչպէս որ սրախաղութեան ուսուցչին անհրաժեշո է, ձեռքը չը խամանալու համար ամեն օր «վարժութեան ժամ» ունենալը, այնպէս էլ կանայք իրանց զգացմունքներով սրախաղութիւն են անում միմիայն վարժութեան համար: Իբրև լաւ հասարակութեան պատականող ու ոչ-անձունի երիտասարդ ես շուտ-շուտ հրաւէրներ էի ստանում զնալու «վարժութեան ժամերին» և, որովհետեւ միամտաբար սկզբումը լուրջ կերպով էի վերաբերում այդ վարժութիւններին, յաճախ վերքեր էի ստանում: Ասենք՝ այդ վէրքերը մահացու վէրքեր չէին, աւելի՝ ցաւ տւող ծակոցների էին նման: Վերջապէս՝ ես համոզւած եմ, որ մեր կեանքը վարող ու մեր հասարակութեան մէջ գտնւող ամեն մի մարդ պէտք է իւր տուքը միամտութեանը: Իմ չարչարանքներս համեմատաբար կարճ աւեցին: Եետոյ սկսեց մի ուրիշ շրջան, որ ես կարող եմ բնաորոշել

«la revanche», բառով ևս վճարում էի պարտքերս և, եթէ հնարաւորութիւն էի տալիս ինձ ասպարէզ կանչելու, — միայն այն պատճառով որ ես ինքս ուզում էի ասպարէզ դուրս դար»

Իմ առաջ բաց էին բոլոր դռները և ես շուտով ծանօթացայ հասարակութեան բոլոր խաւերի հետ՝ սկսած լեզիտիւմներից, որոնց դահլիճներում սիրոս սաստիկ նեղանում էր, և վերջացնելով Բօնսապարտների ու Օրլէանների թաղի տիաղոսաւոր արիստոկրատիայով, — արիստոկրատիայով, որ կազմում էր բարձր աշխարհը... զուցէ և ոչ Պարիզի, բացց յամենայն դէպս Նիցցաի Դիւմա-որդին, Սարդուն և ուրիշները իրանց կոմսերին, մարքիզներին ու իշխաններին օրինակում են հէնց այդ տեսակ մարդկանցից, որոնք անցեալից մնացած ոչինչ պատմական տրագիֆիաներ չ'ունին և, իրանց տիաղոսների ու եկամուռների շնորհիւ, միմիայն կենսական վայելքների յետելից են ընկած։ Այդ հասարակութեան անդամների թւին կարելի է աւելցնել և խոշոր դրամատէրերին։ ԽՄ՝ զրանց մօտ յաճախելու դիմաւոր պատճառն էին կանաչք, շքեղ, նրբալար ջղերի տէր, նոր տպաւորութիւնների ծարաւ և... համարեա ոչ մի իդէալ չ'ունեցող կանաչք։ Յաճախ նրանք իրանք էլ այնպէս անբարոյական են ինչպէս իրանց կարդացած վէսերը, որովհետև նրանց բարոյականութիւնը չի յնուում ոչ կրօնական հիմքի վրայ, ոչ էլ որ և է՝ մարդում վրայ պարտականութիւն գնող՝ աւանդութեան վրայ։ Բայց այսպէս թէ այնպէս՝ այդ շրջանը փայլի աշխարհ է։ Վարժութեան ժամերը այդտեղ այնքան երկարառե են, որ շատ անգամ հաւասարուում են օր ու զիշերի և երբեմն շատ տրագիկական կերպով են վերջանում, — այդտեղ սովորութիւն չը կայ բուժ սրերով (քապիր) մենամարտել Խնձ էլ մի քանի բաւական ծանր հարւածներ հասան մինչև որ կարգին խրառւեցի ու ինչպէս պէտքն է վարժեցի։ Իմ կողմից շատ մնապարծութեան կամ, որ աւելի վատ է, վատ ճաշակի նշան կը լինէր, եթէ, ես սկսէի երկար ու բարակ պատմել արած քաջադործութիւններս։ այնքանը միայն կ'ասեմ, որ ես աշխատում էի որքան կարելի է չը թողնել որ հօրս երխուսարդութեան վառաւոր լիշտակը մուացւի։

Այդ հասարակութեան ստորին խաւերը երբեմն ընդհատուում են կիսաշխարհ (demi-monde) վերին շերտերի հետ։ Այդ կիսաշխարը աւելի

վտանդաւոր է քան երեսում է առաջին անդամից, — նրանում գուեհ-կականութեան (trivialité) ոչ մի նշով չը կայ. Կիսաշխարհի ցինիզմը արտիստականութեան կերպարանք ունի. Եթէ ինձ այնտեղ չափազնց սաստիկ փետրահան չ'արեցին, — միմիայն այն պատճառով, որ ես այնտեղ մուայ արդէն բաւական սրած կտուցով ու սուր ճանկերով:

Առհասարակ Պարիզի կեանքի մասին կարելի է ասել, որ այդ ջաղացաքարի տակից դուրս եկող ամեն մի մարդ իրան անշուշտ մի քիչ չարչարւած կը զգայ, իսկ այն մարդկանց մասին, որոնք դուրս են գալիս այնտեղից միայն նրա համար, որ շուրջով էլի վերադառնան, — հօ էլ ասել չի ուզիլ. Մարդ միայն բաւական ժամանակ անցնելուց յետոյ է սկսում հասկանալ, որ իւր յաղթութիւնները հաւասար են Պիւռուսի յաղթանակին: Խմ՝ ի ընէ ուժեղ կազմածքս դիմացւ. այդ կեանքի հարւածներին, բայց ջղերս կարգին քայլքայցեցին:

Այսպէս թէ այնպէս, Պարիզը մի առաւելութիւն ունի մուաւոր կեանքի բոլոր միւս կենարոններից: Ես ոչ մի ուրիշ քաղաք չը զիտեմ աշխարհում, որտեղ գիտութեան, գեղարւեստի, ամեն տեսակ հանրամարդկային գաղափարների սաղմերը այնպէս սփոււած լինեն մըթնողուսում; այնպէս թափանցեն մարդու գլխի մէջ՝ ինչպէս Պարիզում: Ոչ միայն մարդս ակամայից իւրացնում է յառաջալիխութեան բովում երեւան եկող նոր բաները, այլ և զրա հետ միասին մարդուս խելքը կորցնում է իւր միակողմանիութիւնը, աւելի սրանում է ու քաղաքակրթուում է: Ես չեշտում եմ՝ քաղաքակրթուում է, որովհետեւ իտալիայում; Գերմանիայում ու Ահճաստանում ես պատահել եմ՝ այնպիսի մարդկանց, որոնք գուցէ և շատ խելք են, բայց չեն ուզում ընդունել, որ իրանց խարօնկի լուսաւոր բակի շրջապատից դէնը կարող է որ և է բան գոյութիւն ունենալ, — այնպիսի մարդկանց, որոնք այն աստիճան բարբարուսավարի յամառ են, որ իւր համոզմոնքները պահպանել ցանկացող համարեա ոչ մի մարդ չի կարող հետները յարաբերութիւն ունենալ:

Ֆրանսիայում կամ, աւելի ճիշտ ասած, Պարիզում այդ տեսակ երեսովներ չը կան: Խնչպէս որ սրբնթաց գետակը շարունակ շփահարելով կոկում, կլորացնում է մէջի քարերը, այնպէս էլ Պարիզի կեանքի հոսանքը կոկում ու մարդաբարոյ է դարձնում:

մարդկանց խելքերը, Անշուշտ այդ ազդեցութիւնից իմ գլուխն էլ քաղաքակրթւած մարդու զուսի է զարձել Ես կարողանում եմ նուրբ կերպով ըմբռնել Ես սիրամարգի աղաղակ չեմ արձակում իմ կարծիքիս հակառակ կարծիք լսելիս կամ ինձ համար մի բոլորովին նոր բան տեսնելիս Գուցէ ամեն տեսակ կարծիքների այդպէս յարգանքով վերաբերելը մարդու բոլորովին անտարբեր է դարձնում; բոլորովին զրկում է եռանդից, բայց Ես, Եթէ ուզեմ էլ չեմ կարող ուրիշ տեսակ մարդ դառնալ:

Մտաւոր հոսանքը ինձ առաջ էր մղում, և Ես լող էի տալիս Հասարակութիւնը, սալոնները, բուդուարները, կլուբները խլում էին իմ ժամանակս: Ես բազմաթիւ ծանօթութիւններ ձեռք բերեցի գիտնական ու արտիստական աշխարհում և ապրում էի այդ հասարակութեան կեանքով կամ, աւելի ճիշտ ասած, ապրում եմ մինչեւ այժմ էլ: Առհասարակ Ես շատ—շատ էի կարդում և կարդացածս հեշտութեամբ իւրացնում էի, այնպէս որ իմ կրթութիւնս շատ առաջ գնաց: Այժմ Ես առաջ եմ գնում զուգընթաց իմ դարի մոտաւոր ընթացքին:

Ես՝ ինքն իրան շափից դուրս լաւ ճանաչող արարած եմ: Յանախ իմ ես-ը ջնաննամն է ուղարկում միւս Ես-ին, որ հետազօտում ու քննում է նրան և չի թողնում, որ նա անձնատուր լինի ոչ մի տպաւորութեան, ոչ մի գործի, ոչ մի զգացմունքի, ցանկութեան, կրքի: Գուցէ ինքնաճանաչութիւնը մտաւոր բարձր զարգացման նշան է, բայց միևնոյն ժամանակ՝ սարսափելի ազդում է զգացմունքի վրայ: Կրել իւր մէջ անընդհատ ինքնաքննութիւն—կը նշանակի բաժանել ամբողջութիւնից հոգու՝ այդ քննադատութեան համար հարկաւոր՝ մասը և ապրել ու զգալ ոչ ամբողջ էութեամբ, այլ նրա մնացեալ մասով:

Այդ այնպէս է տանջում մարդու, ինչպէս կը տանջվի մի թեևզ թռչող թռչունը: Բացի այդ՝ շափից դուրս զարգացած ինքնաճանաչութիւնը զրկում է մարդու որ և է բան անելու ընդունակութիւնից: Եթէ այդ չը լինէր, Համեմու առաջին գործողութեան մէջ կը շամփրէր հօրեղօրը և հանգիստ կերպով նրանից յետոյ կը ժառանգէր դահը:

Գալով անձամբ ինձ՝ պէտք է ասեմ, որ ինքնաճանաչութիւնը,

եթէ երբեմն—երբեմն թոյլ չի տալիս ոյս կամ այն անմիտ քավին անել, միւս կողմից էլ սարսափելի զգեցնում է ինձ, չի թողնում կեարժնանամ ու որ և է մի գործի ամրողջապէս անձնատուր լինեմ: Ես մէջս կրում եմ երկու մարդ, որոնցից մէկը անդադար ամեն բան չափում—կշռում ու քննադասում է, իսկ միւսը՝ ապրում է կիսատ կեակրով և բոլորովին զրկում է վճռողականութիւնից: Ես զիսեմ (որ շատ ցաւալի է ինձ համար), որ այդ լծից ես երբէք չեմ ազատւիլ—ընդհակառակը՝ որքան խելքս ընդլայնանալ այնքան ինքնաճանաչութիւնս կը պարզէի, —և որ մինչեւ անդամ մեռնելուս բոսէին ես չեմ դադարիլ մեռնող Պոշովսկուն քննադասելուց, եթէ միայն տեղը չը պղասորեցնի խելքս:

Երեխ ես հօրիցս սինթետիկական խելք եմ ժառանգել, որով հետեւ ես աշխատում եմ միացնել բոլոր երևոյթները, իսկ զիսութիւններից ոչ մէկը ինձ այնքան սասարիկ չի գրաւել որքան փիլիսոփայութիւնը:

Բայց հօրս երիտասարդ եղած ժամանակը փիլիսոփայութիւնը բավանդակում էր ամրող աշխարհը, ուստի և պատրաստ պատասխան ունէր բոլոր հարցերին: Այժմ փիլիսոփայութիւնը խելքացել է, այժմ ընդունում է, որ ինքը առաջւան ընդհանուր նշանակութիւնը չ'ունի և միմիայն դիտութեան առանձին ճիւղերի փիլիսոփայութիւն է: Ճիշտն ասած, երբ որ այդ բանի մասին մտածում եմ, քիչ է մնում ասեմ, որ մարդկային բանականութիւնն էլ իւր արագեղիան է կրում և որ այդ արագեղիան սկսւել է այն ժամանակ, երբ մարդկային բանականութիւնը զիտակցել է իւր անգօրութիւնը: Գանի որ ես իմ յիշատակարանն եմ գրում, ես այդպիսի բաների մասին իմ անձնական տեսակէտից կը խօսեմ: Ես ինձ մասնագէտ փիլիսոփայ չեմ համարում (իմ մասնագիտութիւնը, ինչպէս ասել եմ արդէն, ոչինչ լինելն է), բայց՝ փիլիսոփայութեան նորագոյն ընթացքով հետաքրքրուող բոլոր մտածող մարդկանց նման՝ ես ընդ միշտ կը մնամ փիլիսոփայութեան ազդեցութեան տակ և կտարեալ իրաւունք ունեմ խօսելու այն հարցի մասին, թէ ինչն է իմ բարոյական էութեան կազմակերպութեան վրայ ազդել ու բաղդրաւթեան մէջ մտել:

Անենից առաջ ես պէտք է յաբանեմ, որ Մեցի դպրոցում ան-

վնաս մնացած կրօնական դաւանանքներս յետոյ չը դիմացան բնագիտական-փիլիսոփայական զրքերի ազդեցութեանը: Այդ չի նշանակում, թէ ես անասուած եմ: Ոչ: Առաջ, շատ առաջ, մէկը չէր ընդունում ողու գոյութիւնը, ինքն իրան ասում էր՝ Նիւթ—և այդ խօսքով հանգատացնում էր իրան: Այժմ միայն ամենայետամնաց փիլիսոփաներն են պաշտպանում այդ յետամնաց տեսակէար: Այժմ փիլիսոփայութիւնը այդպիսի բաներ չի քննում: ամենահետաքրքրական հարցերին պատասխանում է չը դիտեմ-ով և այդ չը դիտեմ-ը արմատ է գցում մարդուս հոգու մէջ: Այժմ հոգերանութիւնը զբաղւում է ամեն տեսակ հոգեկան երևոյթների չափազանց նեղ անալիզով, հոգու անմահութեան մասին հարցնողին պատասխանում է նոյնպէս «չը դիտեմ», և իսկապէս՝ ոչ միայն չը դիտէ այլ չի էլ կարող իմանալ:

Այ հիմա հեշտ կը լինի որոշել իմ մտաւոր դրութիւնս: Ահա այդ դրութիւնը — չը դիտեմ; չը դիտեմ: չը դիտեմ: Հէնց մարդկային բանականութեան այդ գիտնական տկարութեան մէջն է կայսնում տրագեդիան: Ել չեմ առում այն, որ մեր հոգեկան բնութիւնը միշտ յանառ կերպով և բարձրածայն պատասխան է պահանջում այդ հարցերին, որովհետեւ այդ հարցերը ահագին իրական նշանակութիւն ունեն մարդուս համար: Նթէ հանդերձեալում կայ մի բան, մի յաւիտենական բան, այն ժամանակ այսուղի դժբախտութիւնների ու զրկանքների նշանակութիւնը այնքան է քշանում: որ զրօի է հաւասարուում: Այն ժամանակ կարելի կը լինէր դրա վերաբերմասր կրկնել Համեստի խօսքերը, «Թող սատանան սուդ պահի. ես սամոցի վերաբերու կը հագնեմ: Ես համաձայնում եմ մեռնել, — ասում է Ռընանը, — բայց թող ասեն ինձ, թէ ինչի՞ն պէտք կը դայ մահը: Իսկ փիլիսոփայութիւնը պատասխանում է չը դիտեմ:

Մարդ շարշարուում է այդ մեծ անդիտութեան մէջ, զգալով, որ եթէ կարողանար այս կամ այն կողմն անցնել՝ թեթեւութիւն կը ստանար ու կը հանգստանար: Իայց ինչ անի մարդ: Պէտք է արդեօք մեղաղբել փիլիսոփայութիւնը, որ նա փոխանակ սիստեմներ յօրինելու, որոնք ամեն օր փլում են խաղաթղթերից շինած տնակների նման, ըմբռնել է իւր տկարութիւնը և սկսել է զրագւել մեր խելքին մատչելի սահմաններում տեղի ունեցող երևոյթների հետա-

զատութեամբ ու դասաւորութեամբ։ Ո՞ւ կարծում եմ, որ ոչ միայն ես, այլ արդիշ ամեն մարդ էլ կարող է դիմել փիլիսոփայութեանն ու ասել—ես զարմանում եմ քո լրջութեան վրայ, խոնարհում եմ քո անալիզի ճշտութեան առաջ, բայց այնու ամենայնիւ դու ինձ անբախտացրել ես։ Դու կարողութիւն չունես, ինչպէս ինքդ էլ խոստովանում ես, պատասխանելու ինձ համար չափից դուրս կարեոր հարցերի, մինչ սակայն այնքան զօրութիւն կայ մէջդ; որ կարողացել ես խախտել իմ ունեցած հաւատար գէպի գիտութիւնը, որ ինձ վճռողաբար էր պատասխանում ու իւր տւած պատասխաններով հանգստացնում հանգարացնում էր ինձ։ Մի ասիլ թէ՝ քանի որ ոչինչ չես դատապարտում՝ կը նշանակի թոյլ ես տալիս ամեն բանի հաւատալ։ Սուտ է։ Քո մեթոդը, քո ոգին, քո էութիւնը՝ երկրացութիւն ու կրիտիկան են, թէ այդ մեթոդը, թէ այդ սկեպտիկականութիւնդ, թէ այդ կրիտիկադ դու այնպէս ես պատաստել իմ հոգուն, որ մտել են մարմնիս ու պրիւնիս մէջ։ Դու կարծես հրաշէկ երկաթով այբել—ոչնչացրել եւ իմ ոգու այն նեարդերը, որոնց միջոցով աննենդ ու պարզասիրտ հաւատում է, և այժմ, եթէ ես ուզենամ էլ հաւատալ, չեմ կարող, — հաւատալու ընդունակ նեարդեր չը կան հոգուս մէջ։ Դու թոյլ ես տալիս ինձ գնալ պատարագ լսելու, եթէ ցանկութիւն ծագի մէջս, բայց դու ինձ այն աստիճան թունաւորել ես սկեպտիկականութեամբ, որ այսօր ես սկեպտիկաբար եմ վերաբերում ոչ միայն ինքս ինձ, այլ և իմ սկեպտիկականութեանս, ու չը գիտեմ, չը գիտեմ... և տանջուում ու շամում եմ այս խաւարի մէջ...

(Կը շարունակուի)